Մրցույթ՝ ՀՀ Արմավիրի մարզի «Արտամետի Գուրգեն Մարգարյանի անվան միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ՆԶՊ-ի (զինղեկ՝ 0,5 դրույք), ֆիզկուլտուրայի (13 դասաժամ), ֆիզիկայի (7 դասաժամ), քիմիայի (5 դասաժամ), բնագիտության (2 դասաժամ), տեխնոլոգիայի (տղաների և աղջիկների խումբ՝ 2-ական դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման և հարցազրույցի:Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի:Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:

Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

1) դիմում (Ձև 1), մեկ լուսանկար 3Х4 չափի,
2) բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ(դիպլոմ),
3) անձը հաստատող փաստաթուղթ,
4) <<Հանրակրթության մասին>> ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը(առկայության դեպքում),
5) ինքնակենսագրություն (Ձև 5),
6) այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
7) ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
8) հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր(առկայության դեպքում),
9) որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում:Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:

Փաստաթղթերն ընդունվում են 2023 թվականի մարտի 10-ից մարտի 23-ը ներառյալ, ամեն օր՝ ժամը 10:00-ից 14:00-ը, բացի շաբաթ, կիրակի և այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2023 թվականի մարտի 31-ին՝ ժամը 14:00-ին,** ՀՀ Արմավիրի մարզի << Արտամետի Գուրգեն Մարգարյանի անվան միջնակարգ դպրոց>> ՊՈԱԿ-ում. հասցեն՝ Արմավիրի մարզ, Բաղրամյան համայնք, գ. Արտամետ, Գ. Նժդեհի 1:

Տեղեկությունների համար զանգահարել (093) 24-37-40 հեռախոսահամարով:

<< Արտամետի Գուրգեն Մարգարյանի անվան միջնակարգ դպրոց>>ՊՈԱԿ-ի տնօրենություն